

ՎԱԿԵՐԱԳԻՐ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ
ԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՕՏԱՐԱԶԳԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

1945 թ. նոյեմբերի 21-ին ԽՍՀՄ Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Իոսիֆ Ստալինի ստորագրությամբ հրապարակված որոշման համաձայն, ընդառաջ գնալով հայրենիք վերադառնալու սիյուռքահայերի դիմումներին, ինչպես նաև հաշվի առնելով Հայկական ԽՍՀ ղեկավար մարմինների միջնորդությունը՝ Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհին թույլատրվեց կազմակերպել արտասահմանյան երկրներում բնակվող հայերի վերադարձը Խորհրդային Հայաստան: Այս որոշմամբ սկսված սիյուռքահայերի զանգվածային ներգաղթն իր ծավալների պատճառով հայ պատմագիտության մեջ բնորոշվում է որպես Մեծ հայրենադարձություն:

Չնայած այն հանգամանքին, որ և՛ Խորհրդային Հայաստանում, և՛ Սիյուռքի տարբեր համայնքներում բավականին աշխատանք էր տարվել, կազմակերպվել էին հանգանակություններ, Հայկական ԽՍՀ-ում ստեղծվել էին աշխատանքները համակարգող մարմիններ, հատկացվել էին բավականին գումարներ, այնուամենայնիվ, ներգաղթյալներին պատշաճ կերպով ընդունելու և տեղավորելու հարցերում առկա էին բազմաթիվ խնդիրներ: Մանավանդ, եթե հաշվի առնենք, որ ներգաղթյալների հոսքը նախատեսվածից մեծ էր: Դրան գումարվում էր հետպատերազմյան Հայաստանի քայքայված տնտեսական վիճակը, սոցիալական ծանր պայմաններում գտնվող ու աջակցության կարիք ունեցող մեծաթիվ քաղաքացիների առկայությունը: Խորհրդային Հայաստան ներգաղթած սիյուռքահայերը նույնպես հայտնվեցին սոցիալ-տնտեսական խնդիրների այս ողջ շղթայում, որը երկիր ոտք դնելու առաջին իսկ օրերից նրանց չըջանում դժգոհություններ առաջ բերեց: Ապրելակերպի ծանր պայմանները մի կողմ էր նետել այն մղիչ ուժը, որը նրանց դրդել էր Հայաստան գալ: Շատ դեպքերում հայրենադարձներն ամբողջությամբ իրենց էին մեղադրում ստեղծված վիճակի համար, քանի որ կուրորեն հավատացել էին հայրենիքի բարվոք դրության մասին խորհրդային քարոզիչների կեղծ խոսքերին²: Ոչ պակաս խնդրահարույց հանգամանք էր նաև տեղացիների և ներգաղթյալների գաղափարական տարբերությունների հարցը. չէ որ նրանք

* Ներկայացվել է 15. XI. 2024 թ., ընդունվել է տպագրության 21. XI. 2024 թ.:

¹ Հ. Ու. Մ ե լ ի ք ս ե թ յ ա ն. Հայրենիք-սիյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920–1980 թթ.), Երևան, 1985, էջ 24, Հայոց պատմություն, հ. IV, գիրք II, Երևան, 2016, էջ 91–100:

² Մ. Մ. Մ ա Ր Ի Կ յ ա ն. Հույսը գորավիզ, ընտանեկան ճակատագիր, Երևան, 2011, էջ 133:

եկել էին մի երկիր, որտեղ ա՛յլ մտածելակերպ էր, ա՛յլ կենցաղավարություն, ա՛յլ նիստուկաց:

Խորհրդային Միության սահմաններում հայտնվելուց հետո միայն ներգաղթյալները հասկացան, որ զրկված են հետ վերադառնալու հնարավորությունից, ինչն էլ մեծ հիասթափություն առաջացրեց: Մինչ այդ նրանք վստահ էին, որ որևէ խնդրի դեպքում, կամ էլ, ըստ ցանկության և ունեցած ֆինանսական հնարավորության, կարողանալու են այցելել իրենց նախկին բնակավայրերը, չփվել ազգականների ու մտերիմների հետ:

Այս ամենի հետևանքով ներգաղթյալների (առավելապես՝ երիտասարդների) մոտ աստիճանաբար ձևավորվեց դժգոհություն, որը նաև արտահայտվեց Խորհրդային Հայաստանից փախչելու տրամադրվածություններով: Հայաստանի ազգային արխիվում պահվող փաստաթղթերում և ներգաղթյալների հուշերում քիչ չեն դեպքերը, երբ ներգաղթյալները փախուստի փորձեր են կատարել՝ հիմնական շարժառիթ ունենալով երկրի սոցիալ-տնտեսական բարդ ու ծանր վիճակը: Այս հարցը Խորհրդային շրջանի հայրենադարձության սակավ ուսումնասիրված խնդիրներից է³:

Հիասթափությունն առավել մեծ էր Հայաստան տեղափոխված օտարազգիների դեպքում: Ամուսնու կամ կնոջ պատմական հայրենիք տեղափոխվելու, ընտանիքը չկազմալուծելու համար նրանք նկատելի անհատական զոհողությունների էին գնացել՝ լքելով հայրենի երկիրն ու հարազատ-բարեկամներին, և հայտնվել միանգամայն նոր միջավայրում: Ավելին, նրանցից որոշների հետ տեղափոխվել էին նաև ընտանիքի ոչ հայազգի անդամներ: Հայաստան տեղափոխված օտարազգիների համար մեծագույն խնդիր էր ոչ միայն Խորհրդային Միության տարածքը լքելու հնարավորությունից զրկված լինելը, եղած կենցաղային դժվարություններն ու բազմաթիվ խնդիրները (պայմանավորված նաև հայերենին և ռուսերենին չտիրապետելու հանգամանքով), այլև արտերկրում գտնվող հարազատների հետ նույնիսկ ազատ նամակազրահական կապի բացակայությունը, ինչը խնդիր էր նաև ներգաղթյալ հայերի համար: Խորհրդային անվտանգության մարմինները հսկում էին ներգաղթյալ հայերի և Հայաստան տեղափոխված օտարազգիների գրազրույթները՝ կանխելով ԽՍՀՄ-ի վերաբերյալ բացասական տեղեկատվություն պարունակող նամակների առաքումները⁴:

³ Այս մասին տե՛ս Ա. Ս. Մ ա ն ու կ յ ա ն. Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920–1953 թթ., Երևան, 1999, էջ 221–222, Ա. Ս. Վ ի Ր ա բ յ ա ն. Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով: Հասարակական-քաղաքական կյանքը (1945–1957 թթ.), Երևան, 2001, էջ 72–77, Կ. Խ ա չ ա տ Ր յ ա ն. Հայրենադարձ հայերի սահմանախախտումների խնդիրը «Մեծ հայրենադարձության» տարիներին (1946–1948 թթ.). – «Խորհրդային Հայաստանի առօրյա կյանքի «սպիտակ էջերը» (1940–1960-ական թվականներ)» (Հոգվածների ժողովածու), Երևան, 2020, էջ 67–89:

⁴ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 1, ց. 28, գ. 77, թ. 6, Ս. Պ ա լ ե ա ն. Յուզեր ստալինյան օրերից, Լոս-Անճելես, 1988, էջ 77–78, S. Meghreblian. An Armenian Odyssey. London, 2012, p. 65.

Հայկական *ԽՍՀ-ում* հաստատված օտարազգի քաղաքացիների մի մասն ահա այս պատճառներով հրաժարվում էր խորհրդային հպատակություն ընդունել՝ հարազատների հետ կապ ունենալու և երբեք *ԽՍՀՄ* տարածքը լքելու հույսը չկորցնելու նպատակով: Ընդգծենք, որ նրանցից ոչ բոլորն էին տրամադիր ընդմիջտ լքել *ԽՍՀՄ* տարածքը. մի մասը հարմարվել էր եղած պայմաններին: Իշխանությունները հայ ներգաղթյալներին և Հայաստան տեղափոխված օտարազգիներին պարտադրում էին *ԽՍՀՄ* հպատակություն ընդունել: Նրանց համար ընդունելի չէր նույնիսկ Միության տարածքում ապրող, պետության հանդեպ չեզոք տրամադրված, սակայն այլ երկրների քաղաքացիություն ունեցող բնակիչների առկայությունը: Հայրենիք վերադառնալու նպատակով օտարազգի քաղաքացիներն հնարավորության դեպքում դիմում էին իրենց պետություններին՝ *ԽՍՀՄ-ում* գտնվող դեսպանատներին, երբեմն էլ՝ փորձում հատել *ԽՍՀՄ- Թուրքիա* միջպետական սահմանի Հայաստանյան հատվածը: Սակայն խորհրդային անվտանգության մարմինների աջակրթ խնդրության պայմաններում նրանց մի մասին էր դա հաջողվում⁵:

Առաջին անգամ հրապարակվող վավերագիրը Հայկական *ԽՍՀ* ներքին գործերի մինիստրության Լենինականի քաղաքային բաժնի պետ, մայոր Գևորգ Չալաբովի (Չալաբյան)՝ «խիստ գաղտնի» նշագրումով 1947 թ. հունվարի 29-ի զեկուցագիրն է Հայկումկուսի Լենինականի քաղաքային կոմիտեի քարտուղար Անդրանիկ Սավոյանին: Այն ուշագրավ տեղեկություններ է պարունակում Մեծ Հայրենադարձության ընթացքում իրենց ընտանիքների հետ խորհրդային Հայաստանում հաստատված օտարազգիների մասին: Մի իրողություն, որը մինչ այս չի կարևորվել հայ պատմագիտության կողմից: Ուստի սույն հրապարակումը կարող է նպաստել խնդրո առարկա հարցի վերաբերյալ նոր ուսումնասիրությունների ի հայտ գալուն: Այստեղ քննարկվում է երկու հարց: Հիմնական նյութն արտասահմանից ներգաղթած հայերի հետ Լենինական քաղաքում հաստատված օտարազգիների հարցն է. մասնավորապես՝ նրանց, ովքեր հրաժարվում էին խորհրդային հպատակություն ընդունել: Մանրամասներ ներկայացնելով նման անձանց, վերջինների կողմից բերվող պատճառաբանությունների վերաբերյալ՝ զեկուցագրի հեղինակն ընդգծում է, որ նրանք իբրև պատճառաբանություն հայտարարում էին, թե «նախքան մեր գալը, այսինքն՝ ներգաղթը, համոզված էինք, որ մեր ցանկացած ժամանակ կարող էինք վերադառնալ հայրենիք՝ մեր հարազատների մոտ»⁶: Չեկուցագրում քննարկվող հաջորդ խնդիրն անմիջականորեն չի վերաբերվում հրապարակման բուն թեմային, սակայն փոխկապակցված է վերջինի հետ, ուստի նպատակահարմար համարեցինք փաստաթուղթը հրատարակել ամբողջությամբ: Խոսքը Մեծ Հայրենադարձության տարիներին խորհրդային Հայաստան ներգաղթած սփյուռքահայերի՝ խորհրդա-թուրքական սահմանի ՀԽՍՀ հատվածը հատելու փորձերի մասին է: Ի դեպ, Լենինականը սահմանախախտ հայրենադարձների և օտարազգիների համար դիտվում էր իբրև միջանկյալ կայան՝ անօրինական ճանապարհով Թուրքիա անցնելու համար:

⁵ ՀԱԱ, ֆ. 46, ց. 5, գ. 474, թ. 9, գ. 475, թ. 10–12:

⁶ Նույն տեղում, թ. 10–11:

Ստորև ներկայացվող փաստաթուղթը պահվում է Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) ՀԿԿ Լենինականի քաղկոմի ֆոնդում (ֆ. 46): Դրանում կատարել ենք միայն ուղղագրական և կետադրական շտկումներ, իսկ հապավված բառերը՝ լրացրել ուղղանկյուն փակագծերով ([]):

ԳԱՅԱՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ,
ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԿ(Բ)Պ ԼԵՆԻՆԱԿԱՆԵՒ ԲԱՂԿՈՄԻ ԲԱՐՏՈՒՂԱՐ ԸՆԿԵՐ
Ա. Ի. ՍԱՎՈՅԱՆԵՆ

Խ[իստ] գաղտնի
29 հունվարի 1947 թ.
№ 241
ք. Լենինական

Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ արտասահմանից ներգաղթած Հայերի հետ Լենինական եկած օտար ազգի պատկանող քաղաքացիների մեջ կան լուրջ դժգոհություններ, որոնք չեն ցանկանում ընդունել սովետական հպատականություն: Այսպես՝ օրինակ.

1. ԲԱԳՄԱՋՅԱՆ ԴԱԼԳԱ ՀԱԿՈԲԻ – 1924 թվի ծնված, ազգությամբ արաբ, ներգաղթել է Բեյրութից: Հայտնում է դժգոհություն ներկայիս իր պայմանների մասին (նյութական, բնակարանային և այլն): Երբ հարց ենք դնում նրա առաջ սովետական հպատակություն ընդունելու համար անկետա լրացնելու, նա հայտարարում է, որ. «Ես կշտացած եմ ամեն ինչից, կթողնեմ ամուսնուս և կվերադառնամ հայրենիք՝ Արաբիա», ու հրաժարվում է անկետա լրացնելուց:

2. ՄԵԼԻՅԸ ԳՅՈՐԳԻ ԻԼԻԻԱՅԻ – 1909 թվի ծնված, ներգաղթել է Ռումինիայից, ազգությամբ ռումինացի: Ըստ իր հայտարարության՝ ռումինական կոմունիստական պարտիայի անդամ է: Ամուսնացած է Հայ աղջկա հետ, ունի տասը տարեկան դուստր: Ըստ իր հայտարարության՝ հայերի ներգաղթի ժամանակ, չցանկանալով բաժանվել իր ընտանիքից և լսելով Հայաստանի լավ պայմանների մասին, եկել է իր ընտանիքի հետ: Ներգաղթելու օրվանից մինչև հիմա չի աշխատում հայկական և ռուսական լեզուն չտիրապետելու պատճառով: Ինքը՝ որպես բարձրագույն կրթություն ունեցող (պտղաբույժ–այգեգործ) երկար ժամանակ չաշխատելով հանդերձ, ընկել է տնտեսական վատ պայմանների մեջ, տան գույքը վաճառել է տնտեսական ծախսերը հոգալու համար:

Բացի դա՝ նա պարապում է մանր առևտրով (թբիլիսիից մրգեղեն է բերում և Լենինականում վաճառում): Սովետական հպատակություն չի ընդունում՝ նպատակ ունենալով հետագայում մի կերպ վերադառնալ Ռումինիա: Այդ հարցով իր կնոջն ուղարկել է Մոսկվա՝ ռումինական դեսպանի մոտ՝ թույլտվություն ստանալու համար: Այս բոլորից հետո դիմում է Երևան՝ օտարա-

Հպատակների բաժնին⁷, որտեղ թույլ են տալիս ձևակերպվելու առանց քաղաքացիության փաստաթղթեր ստանալու և 4–5 օր մնալուց հետո մերժվում է այդպիսին ստանալուց, որից հետո վերադառնում է Լենինական շատ դժգոհ կերպով: Մթ հունվարի 22-ին մեկնում է Թբիլիսի և առ 27-ը հունվարի չի վերադարձել: Այդ առթիվ նրա կինը՝ Տիրուհին, հայտնում է, որ նա շատ զայրացած էր Երևանի օտարահպատակների բաժնի վերաբերմունքից և նրա հետ վերադառնալը ինձ⁸ հայտնի չէ:

3. ՄԻԼԻՑԻԱ⁹ ՕՖԵԼԻԱ – 1927 թվի ծնված, վերոհիշյալ Գյորգիի քույրն է: Լենինական է եկել իր եղբոր հետ միասին, որը նույնպես չի ընդունում սովետական հպատակություն, և ուզում է անպայման վերադառնալ հայրենիք՝ Ռումինիա: ՕՖելիան, բացի իր մայրենի լեզվից, ուրիշ լեզու¹⁰ չի տիրապետում:

4. ԶԱՐԲԱՆՈՎԱ ՎԱՍԻԼԿԱ ԱՆԳԵԼ – 1921 թվի ծնված, ազգությամբ բուլղար: Եկել է Բուլղարիայից, հրաժարվում է սովետական անձնագիր ստանալուց: Սկզբում գալու ժամանակ տեղավորվել է Ստեփանավանում և հետագայում՝ 1946 թվի դեկտեմբերի սկզբներից, եկել է Լենինական և այժմ ապրում է 9[-րդ] փողոցի № 69 տանը՝ իր ռումինացի բարեկամ, նույնպես հայ տղայի կին Նեղելկա Վալչանովայի մոտ, մեկ սենյակում:

Վասիլկան շատ դժգոհ է իր պայմաններից: Հայտարարում է, որ «ինչ գնով էլ ուզում է լինի, ես սովետական հպատակություն չեմ ընդունի և կվերադառնամ Բուլղարիա»: Ունի մեկ հատ երեք տարեկան դուստր, ամուսինը հայ է և ներկայիս չի աշխատում:

5. ՎԱԼԶԱՆՈՎԱ ՆԵԴԵԼԿԱ ԱԼԵԽԱՆԴՐՈՎՆԱ – 1918 թվի ծնված, եկել է Բուլղարիայից: Ամուսինն աշխատում է կոշիկի գործարանում՝ որպես կոշկարար, տնտեսական պայմանները վատ չեն: Չի ընդունում սովետական հպատակություն՝ պատճառաբանելով, որ առանց իմ հարազատների չեմ կարող ապրել ու չի ստանում սովետական անձնագիր:

6. ԱՐԱԲԱՋՅԱՆ ՏՈՆԳԱ ԴԻՄԻՏՐԻԻ – 1911 թվի ծնված, ազգությամբ բուլղարացի: Ամուսինն աշխատում է Հայտրեստում՝ որպես գիշերային պահակ, ամսեկան ստանում է 300 ռ[ուբլի] աշխատավարձ: Տնտեսապես վատ են ապրում, դժգոհանում է, որ ոչ մի տնտեսական օգնություն չի ստանում: Ունի մեկ հատ դուստր: Սովետական հպատակության համար անկետա լրացնելուց հետո հրաժարվեց ստորագրելուց և հայտարարեց. «Այս պայմաններում ապրել չեմ կարող և չեմ ցանկանում մնալ»:

7. ԲԱՐՈՆՅԱՆ ԿԱՏԻԱ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՎՆԱ – 1916 թվի ծնված, ազգությամբ բուլղար: Ներգաղթել է Բուլղարիայից, ունի մեկ տղա՝ 3 տարեկան, տնտեսապես վատ չի ապրում: Հայտարարում է, որ. «Բարեկամներից ու հայրենիքից չկտրվելու համար չեմ ընդունում սովետական հպատակություն և

⁷ Նշված բաժինը գործում էր Հայկական ԽՍՀ ներքին գործերի մինիստրության կազմում:

⁸ Այդպես է փաստաթղթում. պետք է լինի՝ «իրեն»:

⁹ Այդպես է փաստաթղթում. եղբոր ազգանունը գրված է «Մելիցը», քրոջինը՝ «Միլիցիա»:

¹⁰ Այդպես է փաստաթղթում. պետք է լինի՝ «լեզվի»:

ցանկանում եմ մնալ բուլղարահպատակ և մնալ Լենինականում, ապրել ամուսնուս մոտ»:

8. ԲԱՐՈՆՅԱՆ ՍՈՒԼՏԱՆԿԱ ՍՏԵՖԱՆՈՎՆԱ – 1923 թվի ծնված, ունի 3 տարեկան աղջիկ, եկել է Բուլղարիայից: Նույնպես ծնողներից ու հայրենիքից չկտրվելու համար չի ցանկանում ընդունել սովետական հպատակություն, ինչպես և չի ուզում բաժանվել ամուսնուց: Ցանկանում է ապրել Հայաստանում, բայց՝ բուլղարահպատակ:

Սովետական հպատակությունից հրաժարվողները հայտարարում են, որ նախքան մեր գալը, այսինքն՝ ներգաղթը, համոզված էինք, որ մեր ցանկացած ժամանակ կարող էինք վերադառնալ հայրենիք՝ մեր հարազատների մոտ: Ցուցակում հիշատակված անձանցից Զարբյանովա Վասիլյայի համար չնայած դուրս է գրված սովետական անձնագիր, սակայն նա առ այսօր էլ հրաժարվում է սովետական պատկերաստանայություն, որի անունով դուրս գրված պատկերաստան առ այսօր էլ մնում է քաղմիլ¹¹ բաժանմունքում:

Ինչպես հայտնի է, Հայաստանի մի շարք շրջաններից ներգաղթող հայերի կողմից նկատվում է մեծ ձգտում Լենինական քաղաքում ապրելու համար: Ինչպես, օրինակ, առանց թույլտվության Լենինական են տեղափոխվել շրջակայքի շրջանների ներգաղթող հայերի մի քանի ընտանիքներ՝ Ախուրյանի, Աղինի, Արթիկի, Ամասիայի, Ստեփանավանի, Կիրովականի և այլ շրջաններից: Այդպիսիներից զգալի քանակով ընտանիքներ արդեն տեղավորվել են քաղմիլ բաժանմունքի նախկին շենքի նկուղային տիպի սենյակներում, որտեղ չի թույլատրվում բնակություն հաստատել:

1. 1946 թվի դեկտեմբերի 7-ին Երևան քաղաքում բնակվող ներգաղթած քաղաքացի Սառա Գևորգի Հովակիմյանը Երևանում վաճառում է իր բոլոր ունեցվածքը, մեկնում է Լենինական՝ նպատակ ունենալով անցնելու Թուրքիա:

2. 1946 թվի դեկտեմբերի 27-ին Հոկտեմբերյանի շրջանի բնակիչ, ներգաղթած Սարգիս Սարգսյանը գնացքով մեկնում է Լենինական՝ նպատակ ունենալով անլեզալ անցնելու պետական սահմանը, և մինչև հիմա էլ հայտնի չէ, թե որտեղ է նա:

3. Խաչեր Իսահակի Կարա-Հակոբյանը, որը բնակվելիս է եղել Կիրովական քաղաքում, ա/թ Հունվարի 7-ի լույս 8-ի գիշերը, առանց թույլտվության իր տան ամբողջ իրերը հավաքելով, ամբողջ ընտանիքով մեքենայով տեղափոխվում է Լենինական և իջնում 21[-րդ] փողոցի № 95-ում ապրող իր բարեկամի մոտ՝ նպատակ ունենալով Լենինականում ժամանակավոր բնակվելուց հետո հետագայում ընտանիքով անցնելու պետական սահմանը:

Նկատվում են ներգաղթողների կողմից տնտեսական, բնակարանային դժգոհություններ, որոնք հիմք են ծառայում ընդհանուր դժգոհության:

Լենինականի 21[-րդ] փողոցի № 134 տանը բնակվող Ստեփան Սարգսի Մուշուրյանը պատրաստվում է անլեզալ անցնելու Թուրքիայի սահմանը, որի ժամանակ իր հետ վերցնում է իր մոտ բարեկամ Գարեգին Մուշարյանին, որը բնակվում է Ախուրյանի շրջանի Օճախուլլի¹² գյուղում:

¹¹ Այն է՝ Լենինականի միլիցիայի քաղաքային բաժին:

¹² Ներկայումս՝ Շիրակի մարզի գյուղ Առափի:

Լենինականում բնակվող ներգաղթած Կարապետը մտադրված է անցնել սահմանը, որի համար տանում է նախապատրաստական աշխատանքներ, ուղեկցողներ է փնտրում:

Լենինականի բնակիչ, ներգաղթած Գրիգոր Հովհաննեսի Թովմասյանը ցանկություն է հայտնում անլեզալ անցնելու սահմանը:

Այս տվյալները ասում են այն մասին, որ ներգաղթողների որոշ մասը դժգոհություն հետևանքով ցանկություն են հայտնում անլեզալ անցնելու պետական սահմանը, որի համար փնտրում են ուղեկցողներ տեղի բնակիչներից և մեծ մասամբ սահմանի վրա ապրող կոլխոզնիկներից: Օրինակ՝ 1946 թվի դեկտեմբերի 7-ին Լենինականի բնակիչ Աբգար Ղազարի Օրուկյանն իր ընտանիքով Ազնիվ Օրուկյանի, աղջիկներ Նվարդ և Մերի Օրուկյանների, ոչ իրենց ընտանիքից՝ Սուրեն Իսկյանդարյանի, ով վերևը հիշված երեանից եկած Սառա Գևորգի Հովակիմյանի հետ միասին կազմակերպել էին պետական սահմանը անլեզալ անցնելու համար, որի համար որպես ուղեկցող վարձել էին Ամասիայի Մադարաջուղ¹³ գյուղի բնակիչ Ախմետ ալի-Օղլի Ախունդովին և դեկտեմբերի 7-ին, երեկոյան ժամը 8-ին, ճանապարհ են ընկնում դեպի Թուրքիայի սահմանը: Վերոհիշյալները քաղբաժնի գիշերային շրջիկների կողմից բռնվում են Ձերքիաղի ձոր¹⁴ կոչեցյալ վայրում:

Ախունդովը յուրաքանչյուրին անցկացնելու համար ստացել էր 4000-ական ուլբի՝ որպես վարձատրություն: Անցնողները բնակարանում թողել էին իրենց ողջ կահկարասիքը և ունեցվածքը:

Լենինական քաղաքից անհայտացել են Աբրահամ Հարությունի Համամջյանը և Գրիգորի Մովսեսի Կիպինջյանը, դեռ չի պարզված նրանց որտեղ լինելը:

Սրանք են առկա արձանագրված փաստերը, որի մասին տեղեկացվում է Ձեզ՝ ի գիտություն:

Ն ԳՄ-ի Լենինականի բաժնի պետ, մայոր [Գ.] Չալաբով

ՀԱԱ, ֆ. 46, ց. 5, գ. 474, թ. 8–13: Բնագիր: Մեքենագիր:

¹³ Ներկայումս՝ Շիրակի մարզի գյուղ Գտաշեն:

¹⁴ Ներկայումս «Ձերքեղի ձոր» հանգստի և ժամանցի վայր: